

Վայոց Ձոր



Վայոց Ձորի տարածքը նախկինում մտել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մեջ, կազմելով նրա Վայոց Ձորի գավառը: Որոշ ժամանակ եղել է Օրբելյան և Պռոշյան նախարարական տների ժառանգական կալվածքը: Ռուսաստանին միանալուց հետո կազմում էր Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառը:

Վայոց Ձորի մարզը աչքի է ընկնում բնակչության ոչ միայն ամենափոքր բացարձակ թվով, այլև ամենացածր խտությամբ ՀՀ-ում:

Հնագիտական պեղումներով պարզվել է, որ Վայոց Ձորի տարածքը բնակեցված

է եղել բրոնզի դարից սկսած: Այն նույնպես բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների ասպատակությունների ու ավերածությունների: Եղել են զանգվածային ջարդեր ու բռնագաղթեր: Փոխվել է բնակչության թվաքանակն ու կազմը: Հայ բնակչության առաջին զանգվածային վերադարձը տեղի է ունեցել 1828-1829թթ.: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից այստեղ հիմնադրված հայ ընտանիքները ավելացրին մարզի բնակչության քանակը:

2008թ-ին «ՅԿՅ»-ի կողմից վերանորոգման համար առաջադրվող դպրոցների մասին տեղեկություններ:

Վայոց Ձորի մարզ, գյուղ Սալի

1. Շին. նախահաշիվ կա: Այն կազմել են մարզի շին. վարչությունը(իմ կողմից վերնայման ընթացքում է):
2. Ես տեսել են դպրոցը և մանրամասն ուսումնասիրում են նախահաշիվը:
3. Նախահաշվում նախատեսված են բոլոր աշխատանքները:
4. Դպրոցը բաղկացած է մեկ մասնաշենքից: Դպրոցը ամբողջությամբ մեկ հարկանի է:
5. Մեր կողմից վերանորոգման համար առաջադրվել է դպրոցը ամբողջությամբ:
6. Տանիքը ամբողջությամբ վերանորոգվել է 2003թ.-ին:
7. Դպրոցի էլեկտրականությունը ամբողջությամբ վերանորոգվելու է:
8. Դպրոցը նախատեսված է ջեռուցել էլեկտրականությամբ:
9. Հատակները նախատեսված է, մասամբ վերանորոգման և մասամբ ամբողջությամբ վերափոխման:
10. Ջուգարանները դրսում են և ամբողջությամբ վերանորոգվելու են: Դպրոցի տարածքում ջուր կա:
11. Դռներ վերանորոգվում են, և մասամբ փոխվում:
12. Պատուհանները նախատեսված է ամբողջությամբ փոխարինել մետաղապլաստով:
13. Դպրոցը կառուցվել է 1972թ.
14. Գյուղում ապրում են 250 բնակիչ:
15. Դպրոցում սովորում են 46 աշակերտ
16. Դպրոցում աշխատում են 11 ուսուցիչ և 6 տնտեսական աշխատող:
17. Երևանից մինչև Սալի 125կմ է:

Իմ կարծիքով դպրոցը անհապաղ անհրաժեշտ է վերանորոգել: Դպրոցի տնօրենն է պրն.Միեր Հովակիմյանը: Իմ կարծիքով վերանորոգումից հետո այն լավ կպահպանեն: Մեր կողմից նախատեսված գումարը լիովին բավարար է այն ամբողջական վերանորոգելու:

Կազմեց՝ Ս.Նալբանդյանը
2008թ.02.14



